

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԳՄՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ »ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Զույգերով աշխատանքը որպես մաթեմատիկական բառապաշարի հարստացման և զարգացման միջոց

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Վարդենիս

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հասմիկ Բեյբույան

ՈւՍՈՒՑԻՉ՝ Սպարտակ Վարդանյան

ԴՊՐՈՑ՝ Ակունքի միջնակարգ դպրոց

2022թ.

ՎԱՐԴԵՆԻՍ

Բովանդակություն

Ներածություն	3
Գրական ակնարկ	5
Փորձարարական հետազոտություն	10
Խմբի նկարագիր	12
Հետազոտության ընթացք	12
Փորձարարական դաս 1	14
Փորձարարական դաս 2	15
Տվյալների մշակում և վերլուծություն	17
Եզրակացություն	18
Օգրագործված գրականության ցանկ	19
Հավելված	
Դասապլան 1	
Դասապլան 2	

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ

**Իսնդիրների լուծումն աշակերտների համար անձնական խորը
նշանակություն ունի և արդյունքում թույլ է տալիս
կողմնորոշվելու
որակապես նոր մեթոդներով, առաջ է բերում անձի
գործունեության և ստեղծագործական մտածողության
զարգացում:
Վ.Վ.Դավիդով**

Բառապաշարի հարստացման, ակտիվացման և ամրապնդման ուղղությամբ տարվող աշխատանքները կարևոր տեղ են զբաղեցնում սովորողների խոսքային զարգացման ընդհանուր համատեքստում: Առանց բառապաշարի ընդլայնման անհնար է սովորողների խոսքային հաղորդակցման կատարելագործումը:

Բառապաշարի հարստացման ու ակտիվացման ուղղությամբ տարվող աշխատանքները սերտորեն կապված են ճանաչողական գործունեության հետ: Իսկ դա նշանակում է, որ բառի հետ տարվող աշխատանքի ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել հատկապես բառի խոսքային բնորոշումը, նաև հոմանիշ և հականիշ հարաբերությունները:

Սովորողների խոսքն ավելի արագ է հարստանում, եթե նրանց առջև դնում են այնպիսի պայմաններ, երբ բնական խոսքային գործունեությունը ավելի ինտենսիվ է անցնում:

Մեր կողմից ուսումնասիրվող հարցի արդիականությունն առավել ակնառու է հայ իրականության ժամանակակից հատվածում, երբ համաշխարհային մշակույթի կայացման գործում իր զգալի ներդրումն ունեցած հայ ստեղծագործական հանրությունը, հայ ժողովուրդն այսօր թվում է, թե սպառել է իր կրեատիվ ներուժը և խուսանավում է երբեմնի ստեղծագործող ժողովուրդ կոչվելու փառահեղ կարգավիճակից:

Սույն աշխատանքի կիզակետում այն դրույթն է, որ ստեղծագործող սերունդ աճեցնելու համար խիստ կարևոր գործոն է սովորողների կրեատիվ պոտենցիալի զարգացումը և նրանց ինքնաիրացման զուտ օպտիմալ պայմանների կայացումը, որը պետք է ուղեկցվի ոչ թե արտաքին ինֆորմացիայի զուտ մեխանիկական մատուցմամբ, այլ նաև ստեղծագործական յուրացմամբ:

Չենց այս առումով է, որ կարևորելով սովորողների մտավոր ունակությունների զարգացման խնդիրը՝ վերջինիս կայացման գործում առանձնահատուկ դեր ենք վերագրում բառապաշարին, լեզուների իմացությանը, քանզի, ինչպես կասեր ֆրանսիացի փիլիսոփա Վոլտերը, տարբեր լեզուներ իմանալ, նշանակում է ունենալ տարբեր բանալիներ միևնույն կողպեքը բացելու համար:

Չետազոտության **նպատակն** է, ուսումնասիրելով սովորողների հետ տարվող բառային աշխատանքի խնդիրները, ձևավորել նրանց ճանաչողական ունակությունները, ցույց տալ մաթեմատիկական բառապաշարի հարստացումը որպես լեզվամտածողության զարգացման միջոց:

Չետազոտությունների արդյունքներից ելնելով՝ առաջ քաշվեց հետևյալ **ենթադրությունը**, որ առաջադրված խնդիրների իրականացումը հնարավոր է միայն ճիշտ կազմակերպված պարապմունքների, բառային աշխատանքների, ինչպես նաև ուսուցչի կողմից ուսուցման մեթոդների ճիշտ կիրառման արդյունքում, որոնց համալիր ներգործության շնորհիվ հաջողվում է, հաշվի առնելով սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները, նրանց հաղորդել գիտելիքներ, ձևավորել նրանց կարողությունները, հմտությունները, և ամենակարևորը, նպաստել սովորողների բառապաշարի հարստացմանն ու ակտիվացմանը:

Ելնելով նպատակից և ենթադրությունից՝ ներկայացնենք խնդիրները.

1. Սովորողների բառապաշարի հարստացումը
2. Սովորողների բառապաշարի ամրապնդումն ու ճշտումը
3. Սովորողների բառապաշարի ակտիվացումը
4. Մեծություններին համապատասխան հոմանիշների և հականիշների

ընտրություն

5. Չատուկ խոսքային իրավիճակներում հոմանիշներ և հականիշներ ընտրելու կարողության ձևավորում:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Փիլիսոփայական և գիտական մտքի զարգացման միանգամայն տարբեր փուլերում և այդ մտքի զարգացման գործում իրենց ավանդն ունեցած բազմաթիվ մտածողների, գիտնականների ստեղծագործական որոնումների և ուսումնասիրությունների կիզակետում յուրահատուկ կարգավիճակ էր վերագրված լեզվի հիմնահարցին: Այս խնդրի փիլիսոփայական ասպեկտները իրենց կենսունակությունը կամ հրատապ բնույթը չեն կորցրել նաև մեր դարաշրջանում:

Փիլիսոփայական, լեզվաբանական մտքի պատմությունից հայտնի են լեզվի առաջացման մի շարք հիմնադրույթներ: Ի հակադրություն լեզվի աստվածային ծագման կրոնական ուսմունքի՝ Է.Կոնդիլյակը լեզվի առաջացումը դիտում էր մարդկանց հաղորդացման գործունեության հետևանքով առաջացած դաշինքի արդյունք: Նրա կարծիքով մարդիկ նմանապես արձագանքելով արտաքին աշխարհի ազդակներին և ազդեցություններին՝ կարող էին հեշտությամբ համաձայնության գալ բառերի նշանակության հարցում: Լեզվի առաջացման տեսություններից է նաև <<Էմոցիոնալը>>, որը զարգացվեց Ռուսսոյի կողմից: Նրա կարծիքով մարդու առաջին բնական լեզուն բնական ճիշտ էին, որոնք արտահայտում էին նրա զգացմունքները, հույզերը, կրքերը, այլ ոչ նյութական պահանջմունքները: Լեզվի առաջացման տեսություններից մեկն էլ հանգում է լեզվաբանական հարաբերականության նախահայր Վ.Յումբոլդտին, որը լեզվի առաջացումը դիտում էր ոչ որպես բնապատմական պրոցեսի արդյունք, այլ մարդկության ներունակ, ներքին պահանջմունքների արդյունք, ժողովուրդների ոգու դրսևորում: Այս ասպեկտով Վ.Յումբոլդտը նշում է. <<Ազգի հոգևոր ինքնատիպությունը և լեզվի կառուցվածքը այնքան խորն են թափանցում մեկը մյուսի մեջ, որ եթե տրված է մեկը, ապա մյուսն արդեն կարելի է լիովին բխեցնել դրանից: Լեզուն ասես ժողովրդի ոգու արտաքին դրսևորումն է. ժողովրդի լեզուն նրա ոգին է և ժողովրդի ոգին նրա լեզուն է>>:(Звегинцев et al., 1964, с.71)

Գիտակցելով և մեծ կարևորություն տալով լեզվի խնդրի դժվարություններին՝ 20-րդ դարի խոշորագույն փիլիսոփաներից մեկը՝

հերմենևտիկայի ներկայացուցիչ Ջ.Գ.Գադամերը, գրում է. <<Ի՞նչ է լեզուն. այս հարցը բնականաբար վերաբերվում է մարդկային մտորումների ընդհանրապես հասանելի առավել անհասկանալիին: Լեզուն այնքան մոտ է մեր մտածողությանը և իր իրականացման պրոցեսում այնքան քիչ է հանդիսանում նրա առարկան, որ ասես ինքն է մեզանից թաքցնում իր իսկ կեցությունը>>:(Гадмер,1997, с.609)

ԼԵԶՎԻ ԵՎ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ

Ի՞նչ փոխհարաբերության մեջ են գտնվում լեզուն և մտածողությունը, լեզուն և գիտակցությունը, լեզուն և մարդկային վարքագիծը. ահա բարդ և բավականին հետաքրքիր խնդիրներ, որոնց պատասխանը փորձել են տալ փիլիսոփայական, գիտական մտքի զարգացման գործում իրենց ավանդն ունեցած բազմաթիվ լեզվաբաններ, փիլիսոփաներ և մարդաբաններ: Եթե աշխարհագրական դետերմինիզմի ներկայացուցիչները (Մոնտեսքյո,Բոկլ, Ռեքյու) ազգային հոգեբանության առանձնահատկությունները, մարդկանց բնավորությունը, խառնվածքը, մտածողությունը դետերմինավորող գործոն էին համարում աշխարհագրական միջավայրը,կլիմայական պայմանները, ապա մարդկային մտածողությունը, աշխարհայացքը և վարքագիծը դետերմինավորող նոր գործոնի՝ լեզվի առաջադրումը կապվում է լեզվաբանական դետերմինիզմի կամ, ավելի ճիշտ, լեզվաբանական հարաբերականության տեսության անվան հետ, որի ներկայացուցիչներից էին Վ. Յոմբոլդտը, Է. Սեպիրը, Բ. Ուորֆը և ուրիշներ:

Իմացության պրոցեսում, ամենօրյա գիտակցական գործունեության արդյունքում լեզվին էական նշանակություն է վերագրվել: Ֆրանսիացի խոշորագույն փիլիսոփա Լուի դե Բրոյլը գտնում է, որ երկրագնդի տարբեր լեզուներ օժտված են տարբեր արժանիքներով ու թերություններով, մարդկանց մտքերի ու զգացմունքների յուրահատկությունները, երանգներն արտահայտելու ունակությամբ: Մեծ նշանակություն վերագրելով բնական-խոսակցական լեզուներին, նրանց մեջ տեսնելով որոշակի կրեատիվ պոտենցիալ՝ Բրոյլը գրում է. <<Ֆրանսերեն լեզուն, որն ունակ է փոխանցելու մտքի արագ և ինտուիտիվ եզրակացությունները, ինչպես նաև շարադրել խիստ դատողություններն ու մանրակրկիտ վերլուծությունները, եղել և մնում է գիտական մտքի հստակ արտահայտման գործիք>>: (Бройл,1962, с.332)

Լեզուն նշանների համակարգ է, որը հանդիսանում է մարդկային մտածողության, ինքնաարտահայտման և հաղորդակցման միջոց: Լեզվի օգնությամբ մարդը ճանաչում է շրջապատող աշխարհը: Լեզուն,

հանդիսանալով հոգեկան գործունեության միջոց, փոփոխում է մարդու հոգեկան ֆունկցիաները, զարգացնում է նրա ռեֆլեքսային ունակությունները: Ինչպես գրում է լեզվաբան Ա. Ա.Պոտեբնյան, բառը լեզվի կանխամտածված հայտնագործումն ու աստվածային ստեղծումն է, առաջին հերթին խորհրդանիշ է, իդեալ, որը կենտրոնացնում է մտածողությունը: (Потебня, 1993, с.7)

Արդի պայմաններում գիտության շրջանակներում ընդհանուր ճանաչման է արժանացել այն դրույթը, որ մտածողությունն իրականանում է լեզվի միջոցով, մեր բոլոր մտքերը ծագում և ամրագրվում են գիտակցության մեջ լեզվի բազայի վրա, փոխանցվում են սերնդից սերունդ լեզվի համապատասխան ֆունկցիայի միջոցով: Ընդունված է նաև այն տեսակետը, որի համաձայն լեզուն հանդիսանում է գիտակցության գոյության և գործառնության եղանակ: (Маргарян, 1989, с.121)

Չանրահաշվական լեզուն որպես դրական գործոն

Մաթեմատիկայի հանրակրթական կարևորագույն արժեքներից մեկը նրա դերն է հարակից առարկաների ուսումնասիրության մեջ. առանց մաթեմատիկայի համակողմանի կիրառման անհնար է շարադրել ֆիզիկայի, ինֆորմատիկայի, աստղագիտության, գծագրության դասընթացները: Չանրահայտ են մաթեմատիկայի կիրառությունները քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության դասընթացների մեջ: Խորն են նաև հայոց լեզվի հետ մաթեմատիկայի միջառարկայական կապերը: Չանրակրթական դպրոցի առանցքային առարկան մայրենի լեզուն է. առանց նրա լավ իմացության անհնար է շարադրել որևէ առարկայի վերաբերյալ ինչ-որ գիտելիք: Փորձը ցույց է տալիս, որ շատ դեպքերում աշակերտը չի կարողանում մաթեմատիկական գիտելիքը շարադրել հայերենի վատ իմացության պատճառով: Միաժամանակ՝ հայերենի լավ իմացությունը աշակերտի խելացիության անսխալ վկայությունն է:

Մեր կարծիքով դպրոցում դասավանդվող բոլոր ուսումնական առարկաների հիմնական նպատակներից մեկը պետք է լինի սովորողների հայերենի իմացության խորացումը: Այս տեսակետից չափազանց մեծ է հանրահաշվի դերը, որը հայոց լեզվից հետո հաջորդ կարևոր ու առանցքային դպրոցական առարկան է:

Չայոց լեզվի հետ փոխհարաբերության հարցը

Չանրակրթական դպրոցի հանրահաշիվ առարկայի գործող ծրագրի և նրա հիման վրա գրված դասագրքերի առանձնահատկություններից մեկը հանրահաշվի ներկայացումն է որպես ինչ-որ գործառնություններ և խնդիրներ

լուծելու համար ստեղծված լեզու: Դասագրքերում հանրահաշվի լեզվի կառուցումը իրականացվում է հայոց լեզվի հետ զուգահեռների և փոխհարաբերությունների անցկացման ու հաստատման ճանապարհով: Կարևոր է նաև հայոց լեզվի **բառ, արտահայտություն** և հանրահաշվի լեզվի **հանրահաշվական արտահայտություն** հասկացությունների միջև զուգահեռների անցկացումը: Քննարկվող հարցի տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում հանրահաշվական արտահայտությունների հայերեն գրառումը և ընթերցումը: Հաջորդ կարևոր խնդիրը հանրահաշվի լեզվում նախադասությունների կազմումն է: Հանրահաշվի դասընթացում լեզվի հստակեցման խնդիրը դրվում է նաև հանրահաշվի կիրառական ոլորտի համար: Այստեղ, որպես ուսումնասիրության ընդհանուր ելակետ առաջ է քաշվում առարկա-մեծություն-թիվ-տառ սխեմա: Այն ցույց է տալիս ինչպես հանրահաշվի ուսումնասիրության հեռահար նպատակը, այնպես էլ ուսումնասիրության ռազմավարական գիծը: Նշենք, օրինակ, որ հանրահաշվի նախկին դասագրքերում <<առարկայի մաս>> հասկացությունը չէր ներմուծվում, մինչդեռ այն ավելի գործածական է, քան <<թվի մաս>> հասկացությունը: Այստեղ կարևոր է հասկանալ, որ նշված սխեմայի մեջ հայոց լեզվի ոլորտը առարկաներն են, իսկ հանրահաշվի ոլորտը՝ թվերը և տառերը, իսկ մեծությունները կազմում են միջանկյալ օղակ: Հայոց լեզուն ավելի բազմազան ու հարուստ է, և հանրահաշվական հիմնական առարկաներն ու փոխհարաբերությունները ունեն տարբեր անվանումներ: Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս, օրինակ, առարկաների մեծ կամ փոքր լինելու առնչությունների համար հայոց լեզվում գործածվող բառերի ցանկը՝ կախված նաև առարկաների սեռից:

մեծությունը	առարկան	մեծ է	փոքր է
երկարություն	աշտարակը, շենքը	բարձր է	ցածր է
	ճանապարհը, գետը	երկար է	կարճ է
	ծովը, տակառը	խորն է	ծանծաղ է
	հողամասը	լայն է	նեղ է
	գիրքը	հաստ է	բարակ է

ժամանակ	ուսումնական պարապմունքը	երկար է	կարճ է
արագություն	շարժումը	արագ է	դանդաղ է
գին	ապրանքը	թանկ է	էժան է
տոկոսադրույք	վարկը	բարձր է	ցածր է

Նման հարցերի ուսուցումը կրկնակի օգտակար է՝ ինչպես հայոց լեզվի համակողմանի իմացության, այնպես էլ հանրահաշվի կիրառական խնդիրների լուծման ընթացքում ճիշտ կողմնորոշվելու համար:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԶԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Մաթեմատիկական մեթոդներին տիրապետելը խթանում է սովորողի հետաքրքրությունները, նպաստում կարողությունների և մտածողության զարգացմանը: Մաթեմատիկան հնարավորություն է ընձեռում իրական երևույթները և առօրյա խնդիրները մոդելավորելու միջոցով դրանց ուսումնասիրությունը փոխարկել թվերի, պատկերների և պայմանաձևանների՝ ուսումնասիրելով դրանք մաթեմատիկական մեթոդներով:

Ուսումնական այս բնագավառի հիմնական նպատակն է մաթեմատիկական մեթոդներով աշխատելու, խնդիրներ և վարժություններ լուծելու միջոցով խթանել սովորողի մտավոր ունակությունների զարգացումը, մտածողության ձևավորումը, սովորեցնել հստակ ձևակերպել մտքերը, կատարել գրագետ դատողություններ և արագ կողմնորոշվել տարբեր իրավիճակներում:

Դրանից հետևում է, որ մաթեմատիկայի ուսուցման ընթացքում խնդիրներ լուծելը ինքնանպատակ չէ: Այսպես, կրթական առումով առանձնապես մեծ չէ որևէ խնդրի լուծումն իմանալու նշանակությունը: Այնինչ, խնդրի պարագայում կրթական հիմնական նպատակն է գիտելիքների օգտագործման միջոցով խնդրի արտահայտած իրադրությունը վերլուծելու, լուծման ուղիներ որոնելու, կողմնորոշվելու, վարկածներ առաջադրելու, կանխատեսումներ անելու, վճիռներ կայացնելու, գործողությունների պլան մշակելու, արդյունքները ստուգելու, գնահատելու, անհրաժեշտ ճշգրտումներ կատարելու, հետևանքները վերլուծելու և այլ կարողությունների ու հմտությունների զարգացումը:

Լեզվաբանությունն ու հոգեբանությունը բացահայտում են այնպիսի կարևոր հարց, ինչպիսին է հասկացությունը ակտիվ և պասիվ բառապաշարի մասին: Սովորողները ակտիվ բառապաշարի մեջ են մտնում ընդհանուր գործածական բառապաշարը, բայց առանձին դեպքերում նաև մի շարք հատուկ բառեր, որոնց ամենօրյա գործածությունը բացատրվում է կյանքի պայմաններով: Նշանակում է ընտրելով սովորողների բառապաշարի ակտիվացման բովանդակությունը՝ ուսուցիչները պետք է հաշվի առնեն

սովորողների խոսքային պրակտիկայի պահանջները, նրանց խոսքային միջավայրի պահանջները: Անհրաժեշտ է հիշել լեզվի ուսուցման հիմնական նպատակը՝ այն է լեզուն դարձնել հաղորդակցման միջոց:

Պասիվ բառապաշարը գերազանցում է ակտիվին, սրան են վերաբերվում նաև այն բառերը, որոնց նշանակության մասին կռահում են կոնտեքստից: Եթե մեծահասակների պասիվ բառապաշարի մեջ մտնում են հատուկ տեխնիկական տերմինները, բարբառները, հնաբանությունները, ապա երեխաների մոտ բառերի մի մասը ընդհանուր գործածական բառապաշարից է բովանդակությամբ ավելի բարդ է: Բառերի փոխանցումը պասիվ բառապաշարից ակտիվ իրենից ներկայացնում է հատուկ մանկավարժական խնդիր: Սովորողների կողմից դժվարությամբ յուրացվող բառերի ուսուցումը պահանջում է մանկավարժական մեծ ջանքեր: Ինտելեկտի առկայությունը, արտաքին աշխարհը հիշողության, տպավորությունների, երևակայության, մտածողության օգնությամբ ճանաչելու ընդունակությունները, ինչպես նաև խոսքը, ի հայտ են գալիս վաղ մանկության շրջանում և ինտենսիվորեն կատարելագործվում են նախադպրոցական, կրտսեր դպրոցական և դեռահասության տարիքում:

Նախատեսում են նախնական դիտարկման նպատակով իրականացնել մեկ փորձնական դաս և երկու հետազոտական դաս վերոնշյալ դասարանում: Փորձնական դասաժամին լրացնելու են ստուգաթերթ, որը կլրացնեն նաև երկրորդ հետազոտական դասաժամին: Երկու հետազոտական դասաժամերի խթանման փուլերում կատարելու են բառային

աշխատանք, որը նպաստելու է նրանց բառապաշարի հարստացմանն ու ակտիվացմանը, այնուհետև զույգերով լուծելու են խնդիրներ, որի ժամանակ համագործակցելու են, մեկնաբանելու, արտահայտելու իրենց տեսակետը առարկայական լեզվով և նաև ըստ անհրաժեշտության կիրառելու հոմանիշ - հականիշ փոխհարաբերությունները: Հետազոտական դասերից հետո աշակերտների հետ կանցկացնեն հարցազրույց, որը ևս հնարավորություն կտա եզրահանգումներ կատարելու:

ԽՄԲԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Չետագոտությունս անցկացրել եմ Ակունքի միջնակարգ դպրոցի 6-րդ ա դասարանում:

Դասարանում սովորում եմ 19 աշակերտ,որոնցից 11-աղջիկ եմ 8-ը՝ տղա:Լավ եմ սովորում 5 աշակերտ, 8 ունեն միջին մակարդակի գիտելիքներ,6-ը թույլ եմ սովորում:

ՉԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՔ

Աշակերտների լեզվամտածողության զարգացումը իրականացվում է ինչպես առօրյա կյանքում, այնպես էլ դասաժամերին ուսուցման գործընթացում: Ժամանակին և լիարժեք խոսքին տիրապետելը կարևոր պայման է երեխաների հոգեկանի ձևավորման, նաև հետագայում նրանց ընդհանուր զարգացման համար: Չոգեբանության և մանկավարժության մեջ մեծ նշանակություն է տրվում դասաժամերի ընթացքում պրոբլեմային իրավիճակների ստեղծմանը, այսինքն՝ երեխաների մտածական գործունեության ակտիվացման ամենաարդյունավետ միջոցներից մեկն է:

Մեկ փորձնական և երկու հետազոտական դասերի ժամանակ ձևավորվեցին 9 զույգ: Ինչպես կանխատեսում էի, փորձնական դասին աշակերտների բառապաշարը պասիվ էր, զույգի անդամներից մեկն ավելի արագ էր կողմնորոշվում և իր ձեռքն էր վերցնում զույգի աշխատանքը համակարգողի դերը: Ես ստուգաթերթի միջոցով գնահատեցի առկա վիճակը: : Ստուգաթերթի տվյալները հետևյալն են.

ԱՇԱԿԵՐՏՆԵ ՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱ Ն ՏԵՍԱԿԸ	ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ (ըստ ուսուցչի)
Արագ է կողմնորոշվում անձանոթ իրավիճակներում և արտահայտում է իր տեսակետը	7
Չամագործակցել ով է լուծում խնդիրները	7

Կարողանում է մեկնաբանել խնդիրների լուծման քայլերը	8
Կարողանում է մտքերն արտահատել առարկայական լեզվով	7
Հոմանիշ-հականիշ փոխհարաբերությունները կիրառում է ըստ անհրաժեշտության	7
Անտարբեր է	3
Այլ դիտարկումներ	-

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 1

Առաջին հետազոտական դասի խթանման փուլում կատարեցինք բառային աշխատանք: Գրատախտակին խառը գրել էի մեծություններ (շենք, ճանապարհ, գիրք, արագություն, ապրանք,...) և նրանց համապատասխան հոմանիշներ-հականիշներ (բարձր-ցածր, երկար-կարճ, հաստ-բարակ, արագ-դանդաղ, թանկ-էժան,...), որոնք պետք է գծիկներով համապատասխանեցնեին: Չույգերը ոգևորված քննարկեցին ու առաջարկեցին արագ-արագ համապատասխանեցնել: Երկրորդ զույգը ոչ ճիշտ համապատասխանեցում արեց, բայց ես չուղղեցի: Վերջին խումբը հայտնվեց անհարմար իրավիճակում ու առաջարկեց ուղղում կատարել, մյուսները ևս համաձայնեցին ուղղել: Քննարկեցինք և բերելով սխալ օրինակներ կարևորեցինք բառապաշարի հարստացման խնդիրը: Այնուհետև զույգերով լուծեցին խնդիրներ: Աշակերտները բավականին արագ էին կողմնորոշվում, կարողանում էին համագործակցելով լուծել խնդիրները, միմյանց բացատրել, գրատախտակի մոտ վստահ մեկնաբանում էին լուծման ընթացքը: Մաթեմատիկական բառապաշարը հարստացել էր, ձևակերպումները հստակ էին: Նկատելի էր բառապաշարի հարստացման դերը լեզվամտածողության զարգացման գործում: Անտարբեր աշակերտ չկար դասարանում, որը փաստում էր նաև ԿԱՊԿՈԼ աշակերտի ներգրավվածությունը:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 2

Երկրորդ հետազոտական դասի խթանման փուլում աշակերտները զույգերով համապատասխանեցրեցին հասկացությունները, բանաձևերը, սահմանումներն ու պարզ խնդիրներն իրենց լուծումներին: Չույգերը շրջանաձև ներկայացրեցին մեկական համապատասխանեցում: Այս անգամ ավելի վստահ էին կատարում հանձնարարությունը, մեկնաբանում էին առարկայական լեզվով: Դասարանին հանձնարարվեց 2 խնդիր, որն էլի պիտի լուծեին զույգերով, ավարտելուց հետո

գրեին գրատախտակին և բացատրեին կատարման ընթացքը: Աշակերտներն ավելի արագ էին կողմնորոշվում, որովհետև առարկայական լեզուն հասկանալի էր, իրենց քայլերը պատկերացնում էին: Այս դասին ևս լրացրեցինք ստուգաթերթը, որի արդյունքները հետևյալն են.

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ	ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ (ըստ ուսուցչի)
Արագ է կողմնորոշվում անձանոթ իրավիճակներում և արտահայտում էիր տեսակետը	9
Համագործակցելով է լուծում խնդիրները	8
Կարողանում է մեկնաբանել խնդիրների լուծման քայլերը	7
Կարողանում է մտքերն արտահատել առարկայական լեզվով	9
Հոմանիշ-հականիշ փոխհարաբերությունները կիրառում է ըստ անհրաժեշտության	8
Անտարբեր է	-
Այլ դիտարկումներ	-

Նախատեսել էի նաև դասից հետո անցկացնել հարցազրույց: Իրենց ցանկությամբ հարցազրույցին մասնակցեցին 8 աշակերտ: Հարցազրույցի ամփոփ նկարագիրը հետևյալն է.

1. Ի՞նչն էր լավ կամ առավել հետաքրքիր:

- Հասկանալի էր, հետաքրքիր, ապահովության զգացում կար, զույգերով աշխատելիս իրար օգնում էինք, բացատրում:

2. Նախորդ դասերից ինչո՞վ էր տարբեր:

- Չույգերով աշխատանքը և առաջադրանքները:

3. Ո՞ր պահին էիր դժվարանում խոսել:

-Դասալսողների ներկայությամբ, հատկապես փորձնական դասին:

4. Ե՞րբ էիր քեզ հանգիստ զգում:

-Չույգերով աշխատելիս հանգիստ էի, ազատ, ավելի վստահ: Երբ կարողանում էի առաջադրանքների պահանջները հասկանալ և լուծել:

5. Ի՞նչը քեզ դուր չեկավ:

Ամեն ինչ դուր եկավ, խաղի էր նման ու հասկանալի:

Աշակերտների հետ անցկացված ընդհանուր զրույցը ևս փաստեց, որ զույգերով աշխատանքն ինքնադրսևորվելու հնարավորություն տվեց, ավելի շատ խոսեցին, քննարկեցին: Խոստովանեցին, որ ավելի մեծ էր պատասխանատվության զգացումը, ուշադրությունը՝ առավել կենտրոնացած: Բոլորը խոսելու հնարավորություն ունեցան:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բառային վարժությունները, որոնք անց են կացվում որպես դասի մի մաս, կատարում են այսպես ասած երկու ֆունկցիա՝ օգնում են զարգացնել բառապաշարը և նախապատրաստել կապակցված խոսքի ուղղությամբ խնդիրների իրականացմանը: Բառային աշխատանքը կարևոր է նաև ինքնուրույն խոսքի զարգացման համար: Բառապաշարի հարստացմանն ու ակտիվացմանն ուղղված աշխատանքներն անցկացնելիս պետք է հաշվի առնել տարիքային խմբի առանձնահատկությունները, ինչպես նաև բառային աշխատանքի ուղղությամբ հնարների ճիշտ ընտրությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսիսով իմ հետազոտության ընթացքում ես հասկացա, որ զույգերով աշխատանքը բավականին արդյունավետ է աշակերտների մտավոր զարգացման, բառապաշարի հարստացման և կայուն խոսք կազմելու գործում:

Այն օգնում է ձևավորել դիմացինին լսելու, օգնելու և համագործակցելու հմտություն:

Շատ կարևոր է, որ Մաթեմատիկայի դասերին խնդիրները լուծելու ժամանակ լինի երեխաների համագործակցային փուլ: Դրա շնորհիվ կզարգանա ընդհանուր տրամաբանություն և կոգնի ավելի արդյունավետ աշխատանքին:

Սույն աշխատանքի կիզակետում այն դրույթն է, որ ստեղծագործող սերունդ աճեցնելու համար խիստ կարևոր գործոն է սովորողների կրեատիվ պոտենցիալի զարգացումը և նրանց ինքնաիրացման զուտ օպտիմալ պայմանների կայացումը, որը պետք է ուղեկցվի ոչ թե արտաքին ինֆորմացիայի զուտ մեխանիկական մատուցմամբ, այլ նաև ստեղծագործական յուրացմամբ:

Չենց այս առումով է, որ կարևորելով սովորողների մտավոր ունակությունների զարգացման խնդիրը՝ վերջինիս կայացման գործում առանձնահատուկ դեր ենք վերագրում բառապաշարին, լեզուների իմացությանը, քանզի, ինչպես կասեր ֆրանսիացի փիլիսոփա Վոլտերը, տարբեր լեզուներ իմանալ, նշանակում է ունենալ տարբեր բանալիներ միևնույն կողպեքը բացելու համար

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Гумбольдт В. (1984). “О различии строения человеческих языков и его влиянии на духовное развитие человеческого рода”. Москва, Прогресс
- Звегинцев В. (1964). “История языкознания XIX-XX веков в очерках извлечениях”. Москва, Просвещение
2. Гадамер. Х.-Г. (1997). “Герменевтическое первенство вопроса”. // “Логика и риторика”. Москва, Прогресс
3. Бройл Л. (1962). “По тропам науки”. Москва, Издательство иностранной литературы
4. Потебня А. (1993). “Мысль и язык”. Киев, Типография Адольфа Дарре
5. Маргарян Э. (1989). “Философско-методологические вопросы анализа языка науки”. Ереван, Ереванский ордена трудового красного знамени государственный университет
6. Միքայելյան Հ. (2003). <<Հանրահաշվի ուսուցման հիմնահարցերը>>, Երևան, Էդիտ Պրինտ

Դասապլան 1

Ուսուցիչ՝ Սպարտակ Վարդանյան

Առարկա՝	Մաթեմատիկա	Ամսաթիվ	19.04.2022թ.	Կիսամյակ	2	Դասարան	6
Խմբի նկարագիր	Դասարանում սովորում են 19 աշակերտ, որոնցից 11-աղջիկ են 8-ը՝ տղա:						
Թեմա՝	Մասեր, տոկոսներ, հարաբերություններ						
Օգտագործվող նյութեր	Դասագիրք Հարցաթերթիկ տետրեր						
Դասի նպատակը՝	<p>Նպատակ.</p> <ul style="list-style-type: none"> - արժևորել մաթեմատիկայի դերը կյանքի բոլոր ոլորտներում - ձևավորել մասերով, տոկոսներով և հարաբերություններով խնդիրների և կիրառությունների վերաբերյալ գիտելիքներ և հմտություններ - զարգացնել իրենց ունեցած գիտելիքները գործնականում կիրառելու մեջ 						

Ուսուցման փաստեր, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ

Վերջնարդյունքները	<p>Աշակերտները կկարողանան</p> <ul style="list-style-type: none"> - հաշվել մեծության որևէ մասը և տոկոսը - հարստացնել, ակտիվացնել բառապաշարը - բացատրել հանրահաշվական լեզվով - զարգացնել լեզվամտածողությունը 			
Գործողություններ	Դասի փուլերը	Ուսումնական գործունեություն	Ուսումնական գործունեություն	Առանցքային հարցեր
Ժամ/տևողություն		Ուսուցիչ	Աշակերտներ	

5-10ր	Աշակերտները ողջունում են ուսուցչին և տեղավորում իրենց տեղերում, Տնային աշխատանքի ստուգում:	Ողջունում է աշակերտներին - Բացակա աշակերտներին է գրանցում Տնային աշխատանքի ստուգում:	Աշակերտների ուշադրությունը կենտրոնացնում է դասին Տնային աշխատանքի ներկայացում:	
15-20ր	Ընթացք	Դասարանը բաժանել զույգերի: Բացատրել դասը: Բացատրել ինչպես պետք է աշխատեն: Հանձնարարել կատարել խնդիրներ:	Աշակերտները անհատական նշումներ կանեն, կքննարկեն զույգերի հետ: Այնուհետև շրջանաձև մեթոդով կհնչեն պատասխաններ և գծիկներով կհամապատասխանեցնեն: Զույգերը անհատական կլուծեն խնդիրը, կքննարկեն զույգի հետ:	
7-10ր	Ավարտ	Շրջանաձև մեթոդով կհնչեն մեկական քայլեր: Կկատարի գնահատում	Կներկայացվեն բացատրությունները:	
Տնային աշխատանք		Կազմել նմանատիպ 5-ական խնդիր և լուծել՝ գրելով յուրաքանչյուր քայլի բացատրությունը:		

3-5ր	
------	--

Դասապլան 2

Ուսուցիչ՝ Սպարտակ Վարդանյան

Առարկա՝	Մաթեմատիկա	Ամսաթիվ	21.04.2022թ.	Կիսամյակ	2	Դասարան	6
Խմբի նկարագիր	Դասարանում սովորում են 19 աշակերտ, որոնցից 11-աղջիկ են 8-ը՝ տղա:						
Թեմա՝	Նախորդ դասի շարունակություն՝ Մասեր, տոկոսներ, հարաբերություններ						
Օգտագործվող նյութեր	Դասագիրք Հարցաթերթիկ տետրեր						
Դասի նպատակը՝	<p>Նպատակ.</p> <ul style="list-style-type: none"> - արժևորել մաթեմատիկայի դերը կյանքի բոլոր ոլորտներում - ձևավորել մասերով, տոկոսներով և հարաբերություններով խնդիրների և կիրառությունների վերաբերյալ գիտելիքներ և հմտություններ - զարգացնել իրենց ունեցած գիտելիքները գործնականում կիրառելու մեջ 						

Ուսուցման փաստեր, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ

Վերջնարդյունքները	<p>Աշակերտը կկարողանա</p> <ul style="list-style-type: none"> .զարգացնել ընթերցանությունը .զարգացնել լսելու և հասկանալու կարողությունները .զարգացնել բանավոր և գրավոր խոսքը: <p>Փաստացի վերջնարդյունքի չափանիշ .յուրացնել նոր դասը ՏՀՏ-ի միջոցով :</p>			
Գործողություններ	Դասի փուլերը	Ուսումնական գործունեություն	Ուսումնական գործունեություն	
Ժամ/տևողություն		Ուսուցիչ	Աշակերտներ	

5-10ր	Աշակերտները ողջունում են ուսուցչին և տեղավորում իրենց տեղերում, Տնային հարցերի քննարկում:	Ողջունում է աշակերտներին - Բացակա աշակերտներին է գրանցում Մտուգում է տնային աշխատանքը:	Աշակերտների ուշադրությունը կենտրոնացնում է դասին Ներկայացնում են տնային աշխատանքը:	
15-20ր	Ընթացք	Աշակերտներին կրաժանի գույգերիի և կտա ծրարներ, որտեղ կլինեն թերթիկների վրա գրված հասկացություններ, բանաձևեր, սահմանումներ, պարզ խնդիրներ և իրենց պատասխանները:	Աշակերտները անհատական նշումներ կանեն, կքննարկեն գույգերի հետ: Այնուհետև շրջանաձև մեթոդով կհնչեն պատասխաններ:	
7-10ր	Ավարտ	Դասարանին կհանձնարարի 2 Խնդիր: Շրջանաձև մեթոդով կհնչեն մեկական քայլեր: Կկատարի գնահատում	Զույգերը անհատական կլուծեն խնդիրը, կքննարկեն գույգի հետ: Կներկայացվեն բացատրությունները:	
3-5ր	Տնային աշխատանք	Կրկնել անցածը և դասագրքից լուծել 272-278 խնդիրները:		

